ԲՆԱԳՐԵՐ ԵՒ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

TESTI E STUDI

ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԳԻՆՆԵՐԸ

Հայագիտութեան զարգացման բնորոշ գծերից մէկը, սկսած նրա հիմնաւորումից առ այսօր, Հայաստանի եւ հայերի մասին օտար եւ տեղական գրաւոր աղբիւրների բազմակողմանի ուսումնասիրութիւնն է, ապա նրա արդիւնքներին համապատասխան չօշափելի փաստերի, դիցուք՝ հնագիտական յուշարձանների որոնումը։ Այսպէս՝ հռչակաւոր Անի քաղաքի մասին գրաւոր տուեալները եւ բանահիւսական նիւթը առաջադրեցին քաղաքի հնագիտական ուսումնասիրութեան անհրաժեշտութիւնը, որով հայ հնագիտութիւնը կատարեց իր առաջին հաստատուն քայլը անցեալի Հայաստանի պատմութեան եւ մշակոյթի բացայայտման հարցերում։ Քիչ անց՝ խորհրդային առաջին տասնամեակներին, նման զարգացումներ ստացան նաեւ հին Վաղարշապատի եւ Գառնի ամրոցի մասին գրաւոր պատմական տեղեկութիւններն ու վիմագրական տուեալները, որոնք առիթ հանդիսացան Աշխարհբեկ Քալանթարի գլխաւորած արշաւախմբի պեղումների համար հին Վաղարշապատի առաւել ենթադրելի տարածքում եւ Բաբկէն Առաքելեանի ղեկավարած գիտարշաւի ուսումնասիրութիւնների համար Գառնի ամրոցի տեղում։ Սրան յաջորդեցին հին Հայաստանի մայրաքաղաքների մի մասի՝ Արմաւիր, Արտաշատ, Երուանդաշատ, պեղումները։

Նոյն յաջորդականութիւնը օրինաչափ է նաեւ յուշարձանների առանձին տեսակների ուսումնասիրութեան հարցում, որ թելադրուած է հայագիտութեան տեսական զարգացումներով։ Նշուած խմբում պէտք է տեսնել նաեւ մեր քննութեան առարկայ դարձած յուշարձանի վերաբերեալ փաստական նիւթը։ Ընդ որում՝ սպասելի է, որ ինչպէս գրաւոր տուեալները առաջ են մղում հնագիտական ուսումնասիրութիւնների գործընթացը՝ պարզելու համար այս կամ այն եզրի ետեւում թաքնուած բովանդակութիւնը եւ նրա իրական տեսքը, այնպէս էլ հնագիտական նիւթը կարող է ունենալ գտածոները լրացուցիչ գրաւոր աղբիւրներով լուսաբանելու անհրաժեշտութիւն։

Հին Հայաստանի հոգեւոր ժառանգութեան առաւել ուշագրաւ բնագաւառներից մէկը հին հայերի պաշտամունքն է եւ նրան առնչուող հաստատութիւնների համալիրը։ Վաղմիջնադարեան հայ գրաւոր աղբիւրները սրանց մասին թողել են սուղ, սակայն արժէքաւոր տեղեկութիւններ։ Այս տուեալների մի մասը ակնարկում է իւրայատուկ սրբազան կառոյցների՝ բագինների մասին։

Ի մի բերելով յայտնի բոլոր հայկական եւ հարեւան ու հեռու ժողովուրդների պաշտամունքային համակարգերի տուեալները՝ Հ. Ղեւոնդ Ալիշանը տուել է բագին եզրի հետեւեալ բնորոշումը. «Բագին: Երբեմն այսպէս է անուանւում նոյնիսկ մեհեանը, բայց սովորաբար նրա գլխաւոր մասը, ուր դրւում էին պաշտելին, կուռքը եւ զոհը, ինչպէս մեր եկեղեցիների սեղանն է: Բագինը երբեմն լինում էր նաեւ շարժական, այսինքն՝ սեղանն ու կուռքը մէկտեղ, փոքր ծածկով կամ առանց դրա վերցնելով տեղից տեղ էին տանում, ինչպէս քրիստոնեաներն էլ պատերազմի ժամանակ շարժական սեղաններ են տանում»[1]։

Հայագիտութեան առաջին դասականներից յետոյ, բագիններին վերաբերող գրաւոր աղբիւրագիտական տուեալները քննութեան է առել Բաբկէն Առաքելեանը, որի արդիւնքներն էլ յենակէտ են հանդիսանում յետագայ՝ աւելի խորացուած ուսումնասիրութիւնների համար։

Ներկայումս հայագիտութեան մէջ բագինների վերաբերեալ գոյութիւն ունեն հաւասարապէս ընդունուած մի շարք բնորոշումներ։ Նման արդիւնքը, ինչպէս դժուար չի լինի դրանում համոզուել, մատնանշում է, որ այս բնորոշումները դեռեւս գիտական վարկածներ են՝ խիստ կարօտ լրացուցիչ եւ յուսալի տուեալների օգնութեան։ Նոր փաստերի վերհանումը նաեւ վճռական կարող է դառնալ աւելի անաչառ լուսաբանելու համար ոչ միայն հին հայերի հեթանոսական կրօնի, մասնաւորապէս, կրօնական հաստատութիւնների եւ ծէսի մանրամասները, այլեւ հին հայոց գաղափարախօսութիւնն ընդհանրապէս։

Առանձին մի տեսական խնդիր է, թէ արդեօք հայոց տաճարները եւ սրանց յարող կառոյցները մինչեւ քրիստոնէութեան նախաշեմը մնացե՞լ են խիստ աւանդական տեսքով եւ նմա՞ն են

---

1 ԱԼԻՇԱՆ, Հ. Ղ., *Հայոց հին հաւատքը կամ հեթանոսական կրօնը*, Երեւան 2002, 215:

եղել հարեւան երկրների հինարեւելեան դասական շինութիւններին, թէ ժամանակի ընթացքում ստացել են հելլենիստական յայտնի տաճարներին եւ տաճարական համալիրներին բնորոշ տեսք։ Հնչած վերջին այս խնդիրը ոչ պակաս կարեւոր է հին Հայաստանի պատմութեան համար։

Հին Հայաստանի պաշտամունքային շինութիւնների եւ մասնաւորապէս բագինների վերաբերեալ փաստական սուղ տուեալների արմատական լուսաբանման հիմնական գրաւականը Հայաստանի մշակոյթի առանձին խնդիրներին վերաբերող հայ միջնադարեան եւ օտար գրաւոր սկզբնաղբիւրների ընձեռած տուեալների համադրումն է Հայաստանի եւ Մերձաւոր Արեւելքի ու Արեւելեան Միջերկրածովի երկրների պաշտամունքային կառոյցներին վերաբերող հնագիտական նիւթի հետ, որն ինքնին ծաւալուն ուսումնասիրութեան առարկայ է։ Նկատենք, որ այս փաստական տուեալների կազմում Հայաստանին վերաբերող նիւթը թէեւ առաւել կարեւորն է բուն երկրի պատմութիւնը լուսաբանելու համար, սակայն իր ծաւալով ամենահամեստն է՝ թողնելով առայժմ անլուծելի կամ թերի շատ խնդիրներ։

Հայ հեթանոսական գաղափարախօսութեանը վերաբերող հնագիտական տուեալներ մինչեւ անցեալ դարի կէսերը, եթէ անգամ ի յայտ են եկել, ապա չափազանց աւերուած՝ հայագէտներին թողնելով սպասողական վիճակում[2]*։ Այս պայմաններում ծնուած մի մասնաւոր հարց է, թէ իրականում ի՞նչ պէտք է հասկանալ գրաւոր սկզբնաղբիւրների յիշատակած բագին հասկացութեան տակ, եւ հայագիտութեան կողմից բագինների համար առաջարկուած հետեւեալ հնարաւոր տարբերակներից ո՞րն է աւելի մօտ իրականութեանը։*

---

2 Հայագիտութեան մեր միւս երախտաւորը՝ Գէորգ Տիրացեանը, ձեռքի տակ ունենալով շատ սուղ տուեալներ, այնուամենայնիւ հակւում էր այն կարծիքին, որ հին Հայաստանի տաճարներն իրենց կերպարանքով աւելի հինարեւելեան են եւ նուազ հելլենիստական տիպի (տե՛ս ТИРАЦЯН, Г. А., *Культура древней Армении. VI в. до н. э. – III в. н. э. (по археологическим данным)*, Ереван 1988, 100-101: Սրա մասին մանրամասն տե՛ս նաեւ HAKOBYAN HAYK, *Gregory the Illuminator in Front of a Pagan Temple*, in *Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, Urartu and its Neighbors; Festschrift in honor of Nikolay Harutyunyan in occasion of his 90th birthday*, V, Issue 2, 2010, 201-236; ՅԱԿՈԲԵԱՆ ՀԱՅԿ, *Հեթանոսական տաճարը Լուսաւորչի թիկունքում*, ի «*Հանդէս ամսօրեայ*», ՃԻԶ (2012), թիւ 1-12, 110-174):

Ա.– Մինչեւ այժմ առաջարկուած ընորոշումներից մէկն այն է, որ բագինները մեհեաններ *են՝ կուռքերի համար չինուած տաճարներ*[3]*, այսինքն՝ տաճարական շէնքեր՝ սրանցում կուռքեր տեղադրելու համար։ Բ. Առաքելեանի նման ընորոշման համար հիմք է ծառայել Ագաթանգեղոսի այն հաղորդումը, համաձայն որի՝ աւերւում են «Բագիններին ամենայն չինուածները» (կամ չինուածքները)*[4]*։ Ստորեւ տողատակում տրուած ծաւալուն նկարագրութիւնից երեւում է, որ տուեալ բագինները բարձր տեղում տարբեր տեսակի չինանիւթերով կառուցուած ինչոր չինուածքներ են, սակայն բացօթեայ, թէ ծածկի տակ առնուած, սկզբնաղբիւրի տողերում մնում է անյայտ։*

Բ.– Երկրորդ հնարաւորութիւնը բագինների տակ առաջարկում է հասկանալ արձաններ, օրինակ՝ Տիգրան Բ.ի կանգնեցրած բագինները, որոնց գոհեր են մատուցուել եւ երկրպագութիւն արուել։ «Իբրեւ առաջին գործ նա կամեցաւ մեհեաններ շինել, Հայաստանի գլխաւոր տաճարներում կանգնեցնում է արձաններ՝ Անիում, Թիլում, Երիզայում, Բագահաուիճում, Հաշտից տեղում *(իսկ քանի տող ներքեւ հաղորդւում է, որ արձան է դրւում նաեւ Թորդան աւանում – Հ. Յ.)*։ ...Եւ այսպէս մեհեաններ շինելով եւ մեհեանների առաջ բագիններ կանգնեցնելով՝ բոլոր նախարարներին հրամայում է գոհեր մատուցանել եւ երկրպագութիւն անել։ Բագրատունեաց ցեղի[ց] մէկի, որ Ասուդ էր կոչւում, *(Տիգրանը – Հ. Յ.)*

---

3 ԱՌԱՔԵԼԵԱՆ Բ., *Բագին*, ի *Հայկական սովետական հանրագիտարան*, հտ. 2, Երեւան 1976, 198։

4 Գրիգորը «ձորակից ելնելով կանգնեց շինուածքի բարձրաբերձ տեղերին դէմ յանդիմանս... ուժգին հողմ փչեց հողմը բարձրացաւ, ուռեց լեռան հաւասար եւ եկաւ հարքեց, տապալեց, վայր գցեց **բագինների ամբողջ շինութիւնները**։ Այնպէս կործանեց, որ դրանից յետոյ ոչ ոք այդ տեղում չէր կարող որեւէ հետք նշմարել, ո՛չ քարի, ո՛չ փայտի, ո՛չ ոսկու, ո՛չ արծաթի եւ բնաւ չէր երեւում, թէ այնտեղ որեւէ բան էր եղել», ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, *Պատմութիւն Հայոց*, թրգմ. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ, Ա., Երեւան 1977, § 813 (Նա «ելեալ ի ձորակէն եկաց յանդիման բարձրաբերձ տեղեացն շինուածոցն... հողմ ուժգին բղխեաց... Եւ երթայր հողմն ուռուցեալ լերին հաւասար, եւ չոգաւ, հարքեաց, տապալեաց, ընկէց զամենայն շինուածսն բագնացն։ Եւ այնչափ կորոյս, զի յետ այնորիկ ոչ ինչ ոք յայնմ տեղւոջ նշմարանս կարէր գտանել, ո՛չ քարի եւ ոչ փայտի, ո՛չ ոսկւոյ եւ ոչ արծաթոյ, եւ ոչ բնաւ երեւէր, թէ լեալ ինչ իցէ անդ», *Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց*, աշխտ. ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆ, Գ. - ԿԱՆԱՅԵԱՆՑ, Ս., Տփղիս 1909, § 813)։

լեզուն կտրեց, որովհետեւ [սա] անարգել էր արձանները»[5]։ *Այս դէպքում կարող ենք ենթադրել, որ յիշեալ բագինները, կամ այլ կերպ ասած՝ պատկերարձանները, գտնւում էին բաց տեղում՝ մեհեանների առաջ։ Հետեւեալ մեր ենթադրութիւնն այն է, որ յիշեալ պատկերների առաջ պէտք է լինէին զոհասեղաններ, որոնց վրայ էլ պատկերի առաջ զոհեր էին մատուցւելու։*

Գ.– Երրորդ դէպքում, ըստ Բ. Առաքելեանի, բագինները եղել են զոհարաններ կամ զոհասեղաններ՝ դրուած գերեզմանների վրայ։ Այսպէս, համաձայն Մովսէս Խորենացու, Բարդածանը «Իր մատեանում՝ մեհենական պաշտամունքի վերաբերմամբ պատմում է, թէ Հայոց թագաւոր Տիգրան վերջինը պատուել է իր եղբօր՝ Մաժան բրմապետի գերեզմանը Բագաւանում՝ Բագրեւանդ գաւառում, գերեզմանի վրայ բագին շինելով»։ *Ընդ որում՝ գերեզմանի վրայ բագին էր շինուած նաեւ այն նպատակով, որ* «այդտեղի զոհերից վայելեն բոլոր անցորդները եւ հիւրեր ընդունուեն գիշերելու համար»[6]։ *Խորենացու այս լրացումը թոյլ է տալիս ենթադրել, որ բագինների վրայ արւում էին առատ զոհաբերութիւններ, որոնք թոյլ էին տալիս հիւրասիրելու շատերին, իսկ բագինների հարեւանութեամբ, ի թիւս հնարաւոր այլ կառոյցների, շինուած էին հիւրանոցներ՝ այս անցորդներին կերակրելուց յետոյ օթեւան տալու համար։ Գուցէ անցորդներին սպասարկելու այս հին կարգը հասել էր մինչեւ Պապ թագաւորի օրերը, որն էլ անկեւանոց համարուած այս կամ նման կենտրոնները իր հրամանով փակել էր տուել։*

Մենք կարող ենք ընդարձակել այս երրորդ վարկածի գործառոյթը եւ բագինը տարածել ոչ միայն գերեզմանի վրայ շի-

---

5 ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ, *Հայոց պատմութիւն*, խմբ., ՄԱԼԽԱՍԵԱՆ, Ս., Երեւան 1981, Բ., ժդ. (Տիգրան «առաջին գործ զմեհեանսն շինել կամեցաւ… Եւ այսպէս մեհեանս շինեալ, եւ առաջի մեհենիցն բագինս կանգնեալ, զոհս ամենայն նախարարացն հրամայէ մատուցանել հանդերձ երկրպագութեամբ. զոր չառեալ յանձն արանց Բագրատունեաց. յորոց զմիոյ ուրումն զլեզուն հատեալ, որում անուն էր Ասուդ, վասն պատկերացն անարգանաց՝ ոչ այլ իւիք խոշտանգէ», *Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց*, աշխատութեամբ ԱՐԵՂԵԱՆ, Մ., - ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, Ս., Տփղիս 1913, էջ 127-128):

6 ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ, *Հայոց պատմութիւն*, Բ., կզ. (Բարդածան «պատմէ ի մեհենիցն պաշտամանց՝ վերջին Տիգրանայ արքայի Հայոց պատուեալ զգերեզման եղբօրն իւրոյ Մաժանայ բրմապետի ի Բագնացն աւանի, որ ի Բագրեւանդ գաւառի, բագին ի վերայ գերեզմանին շինեալ, զի ի զոհիցն ամենայն անցաւորք վայելեսցեն, եւ ընդունիցին հիւրք երեկօթիւք»):

նուած զոհարանների, այլեւ բոլոր, յամենայն դէպս բացօթեայ զոհասեղանների վրայ։ Սրանով հնարաւոր է դառնում քիչ աւելի սեղմել եւ յստակեցնել բագինների ընորոշումները՝ միաւորելով վերը Առաքելեանի առաջադրած եւ մեր կողմից խմբագրած երկրորդ եւ երրորդ վարկածները։

Դ.– Միւս տուեալների հիման վրայ՝ բագինը նոյնացւում է սրաբարանի, իսկ աւելի ստոյգ՝ կրակարանի *հետ։ Մասնաւորապէս, սասանեան արքայ Որմիզդ-Արտաշիրը* «Մեհեանների պաշտամունքն է՛լ աւելի է զարգացնում, այլեւ **հրամայում է անշէջ պահել Որմզդական հուրը Բագաւանի բագինի վրայ:** Բայց այն արձանները, որ Վաղարշակ շինել տուեց իր նախնիքների պատկերներով, ինչպէս եւ արեգակի եւ լուսնի պատկերներն... Արտաշիրը հրամայում է փշրել»[7]։ *Սասանեան արքայից արքայի որդի՝ Մեծ Հայքի թագաւոր Որմիզդ-Արտաշիրի վերաբերմունքը Հայոց սրբարանների նկատմամբ, թոյլ է տալիս ենթադրել, որ նրա օրոք, թէկուզ եւ ժամանակաւորապէս, կտրուկ փոխուել են Հայաստանի հին աւանդական պաշտամունքի կարգն ու նրան մասնակից սրբապատկերների կազմը։ Հայ աւանդաբար պաշտելի նախնիների եւ աստուածութիւնների խորհրդանշաններին փոխարինում են զրադաշտական խորհրդանիշներ։ Այս համատեքստում՝ բագինում կանգնեցուած կրակի զոհասեղանն էլ պէտք է լինէր նման՝ բազում օրինակներից յայտնի ատրուշաններին։ Սակայն սա բոլորովին չի բացառում նոյն տեղում նախկին հայ հեթանոսական սրբարանում կրակի որեւէ զոհասեղանի գոյութեան հնարաւորութիւնը. հին Հայոց կրօնական համակարգին, ի տարբերութիւն աւելի կտրուկ իրանականից, ընորոշ էին տաճարներ, որոնցում անպայման կանգնեցւում էին տուեալ սրբութեանը նուիրուած կուռքեր, բացի այդ, տաճարներում կամընտրական, ոչ պարտադիր, կարող էր այս կամ այն աստուածութեան պատուին վառուել անշէջ հուրը*[8]։

---

7 ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ, *Հայոց պատմութիւն*, Բ., հէ. (Արտաշիր «եւ զմեհենիցն պաշտամունս առաւել եւս յորդորէ. այլ եւ զհուրն որմզդական որ ի վերայ բագնին որ ի Բագաւան, անշէջ հրամայէ լուցանել: Բայց զանդրիսն, զոր արար Վաղարշակ պատկեր իւրոց նախնեացն հանդերձ արեգակամբ եւ լուսնիւ յԱրմաւիր, եւ փոխեցան յԱրմաւրայ ի Բագարան եւ դարձեալ յԱրտաշատ՝ զայնոսիկ փշրէ Արտաշիրէ»):

8 ЛЕЛЕКОВ Л. А., *К семантике и типологии храмовых сооружений армянского язычества*, в *Историко-филологический журнал*, 1983, № 1, 64.

Կրակարանին առնչուող բագինի այս վարկածն էլ օրինաչափ է խմբագրել՝ բագին հասկացութիւնը տարածելով ոչ միայն կրակարանի, այլեւ միւս տեսակի սրբարանների վրայ, քանի որ եթէ գոհասեղան-սրբարանի մի տեսակը աղբիւրներում կոչուած է բագին, ապա ոչինչ չէր խանգարելու հին հայերին բագին կոչելու նաեւ սրբարանների միւս տեսակները. իսկ որ բագինը լայն հասկացութիւն էր, երեւում է գրաւոր աղբիւրների բերած տուեալներից[9]։ Սա թոյլ է տալիս բագին հասկացութեան տակ միաւորելու վերը բերուած երկրորդ, երրորդ եւ չորրորդ վարկածները՝ տուեալ դէպքում աւելի կանոնակարգելով խնդիրը համաձայն գրաւոր սկզբնաղբիւրների։

Ե.- Վերջապէս, բագինը հայագիտութեան մէջ դիտուել է որպէս կառուցուածքների կամ շինութիւնների խումբ ***կամ*** համալիր[10]։ ***Երուանդը նորակառոյց Երուանդաշատից*** «հիւսիս, մօտ քառասուն ասպարէզ հեռու, Ախուրեան գետի վրայ, շինեց մի փոքր քաղաք... եւ կոչեց Բագարան, այսինքն թէ բագիններն այնտեղ են սարքաւորուած[11], եւ այնտեղ փոխադրեց Արմաւիրում եղած բոլոր կուռքերը»[12]։ ***Հետաքրքիր է, որ Բագարան անունից Խորենացին բխեցնում է շինուածքի գործառոյթը[13]։***

---

9 Սրբարանների տեսականին, որ ուսումնասիրւում է մեր կողմից շուրջ երկու տասնամեակ, շատ ընդարձակ է, եւ սա մի առանձին՝ ուշագրաւ եւ ծաւալուն նիւթ է, որին այստեղ չենք անդրադառնում: Մասնաւորապէս սրա մասին տե՛ս ՅԱԿՈԲԵԱՆ, ՀԱՅԿ, *Անտիկ Հայաստանի զոհասեղանները (ըստ Հողմիկի հնավայրի տուեալների)*, ի *Շիրակի պատմամշակութային ժառանգութիւնը, հանրապետական չորրորդ գիտաժողովի զեկուցումների հիմնադրոյթներ*, Գիւմրի 2000, 17-18:

10 ԱՌԱՔԵԼԵԱՆ, Բ., *Բագին, Հայկական սովետական հանրագիտարան*, հտ. 2, 198:

11 Գ. Խ. Սարգսեանն այս հատուածը ռուսերէն թարգմանում է որպէս *строй алтарей* (զոհասեղանների շարք) եւ պատկերը համեմատում Նեմրութի հելլենիստական սրբարանում բացուած զոհասեղանների շարքերի հետ. տե՛ս САРКИСЯН Г. Х., *Обожествление и культ царей и царских предков в древней Армении*.- Вестник древней истории, 1966, № 2, 8: Սրանց մասին աւելի մանրամասն տե՛ս ստորեւ:

12 ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ, *Հայոց պատմութիւն*, Բ., խ. (Երուանդ «այլ հեռագոյն ի նմանէ իբր քառասուն ասպարիսաւ զհիւսիսով՝ նման իւրոյ քաղաքին շինեաց քաղաք փոքր ի վերայ գետոյն Ախուրենայ, եւ անուանեաց Բագարան, այս ինքն թէ ի նմա զբագնաց յօրինեալ է զկազմութիւն. եւ փոխեաց անդր զամենայն զկուռսն որ յԱրմաւիր: Եւ մեհեանս շինեալ՝ զեղբայր իւր զԵրուազ քրմապետ կացուցանէր». *Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց*, Բ., խ., 166):

13 САРКИСЯН Г. Х., նշ. աշխ., 10:

Աստուածից բնականաբար բխում է մի կարեւոր հարցադրում. բագինները արդեօք մեհեաննե՞ր են, արձաննե՞ր, զոհարաննե՞ր, սրբարաննե՞ր, թէ չինութիւնների համալիր։ Վերն արդէն առաջարկեցինք բագին հասկացութեան մի քանի չափորոշիչները՝ «արձան», «զոհարան», «սրբարան», *համապատասխան մեկնութիւններով միաւորել զոհասեղանի տեսականու մէջ, քանի որ դրանք իրար ոչ թէ հակասում են, այլ լրացնում։*

Հինգերորդ վարկածը՝ չինութիւնների համալիրը, ունի բաւական ընդարձակ ու անորոշ ձեւակերպում՝ իր մէջ կլանելով ցանկացած պաշտամունքային կառոյց, սակայն եթէ այն համարենք միայն վերը դիտուած բազմազան կառոյցների միաւորում, այլ ոչ թէ ցանկացած պաշտամունքային կառոյց, ապա ընդունելի կլինի նաեւ այս բնորոշումը։ Երկրորդ, երրորդ եւ չորրորդ բնորոշումները, ի միջի այլոց, կարող են վկայել բագինների կառուցուածքային բազմազանութեան մասին նաեւ մի ընդհանուր կառուցի սահմաններում՝ ակնարկելով զոհարանների համալիրի *գոյութեան մասին, մի բան, որ տեսնում ենք հինգերորդ բնորոշման մէջ։*

Արդ՝ բաց է մնում առաջին բնորոշման խնդիրը, որ, սակայն, եւս լուծելի է։

Հնագոյն իրանական պանթէոնում մինչեւ Զրադաշտի կրօնական բարեփոխումը գերագոյն աստուածը Միթրան էր, եւ նրա անուններից մէկն էր ռուսերէն՝ «աստուած» *կամ* «baga»[14]*։ Սակայն սրանից չի կարելի հետեւեցնել, որ հին հայերը մեհեանի, այսինքն՝ Միհրին կամ մի այլ աստուածութեան նուիրուած տաճարի եւ արձանի (կամ եթէ ընդունենք, որ այն նոյնական է բագինին) միջեւ դնում էին հաւասարութեան նշան։ Բագինները ցանկութեան դէպքում կարելի է նոյնացնել տաճարների հետ միայն վերջիններիս սկզբնական բովանդակութիւնն ընդունելու դէպքում. այն է՝ հնագոյն տաճարները, աւելի ճիշտ, պաշտամունքի վայրերը, եղել են բացօթեայ սրբարաններ[15]։ Նոյնը տեսնում ենք նաեւ հին աշխարհի ուրիշ ժողովուրդների, օրինակ՝*

14 ДАНДАМАЕВ М. А., ЛУКОНИН В. Г., *Культура и экономика древнего Ирана*, Москва 1980, 325-326.

15 Տաճարների եւ նրանց սերտ առնչուած կոթողների բնականոն զարգացման պատկերը տե՛ս հետեւեալ ուսումնասիրութեան մէջ. ՅԱԿՈԲԵԱՆ, ՀԱՅԿ, *Հոգեւոր հաստատութիւնների յօրինուածքը Հայաստանում (Հնագոյն ժամանակներից մինչեւ անտիկ դարաշրջանը)*, ի «*Էջմիածին*», 2012, ԺԱ., 33-52:

առաւել լաւ փաստագրուած քաղդէացիների եւ յոյների պաշտամունքային հնագոյն կառոյցներում։ Այս ոգով է մեկնաբանւում Կիկերոնի հետեւեալ հաղորդումը։ Աքեմենեան արքայ Քսերքսէսը հէնց պարսից մոգերի խորհուրդը հաշուի առնելով էր այրում յունական տաճարները, քանի որ մոգերը կարծում էին, թէ ամբողջ աշխարհը մի տաճար է, եւ մեղք է աստուածներին փակել տաճարների պատերի ետեւում[16]*։ Նման մտայնութիւն պարսից կրօնական հաստատութիւնների մասին կարելի է տեսնել գրաւոր աղբիւրներում՝ սկսած Հերոդոտոսից, սակայն, իրականում, բացօթեայ սրբարաններից բացի Իրանում, ինչպէս եւ Հայաստանում, առկայ էին եւ փաստագրուած են նաեւ տաճարական շինութիւններ։*

Ալիշանը սրանց անհրաժեշտութիւնը բացատրում է առնուազն հետեւեալ պատճառով։ Տաճար *հասկացութիւնը* «հաւանօրէն զուգակից է պարսկերէն թեեր բառին, որ նշանակում է *ամենատուն*։ Եւ բնական է հետեւեցնելը, բանի որ ամրանը, մանաւանդ հայոց երկրի պէս ձիւնապատ վայրում պաշտամունք կատարել հնարաւոր չէր, անհրաժեշտ էր ծածկուած ու կառուցուած մի տեղ, եւ ահա սա կարող էր լինել տաճարը... Մեր հին նախնիների պաշտամունքարանի աւելի յատուկ անուն է թւում *մեհեան*ը»[17]։

Հայաստանի առնչութեամբ էլ դասական հայագիտութիւնը, յանձին Հ. Ղեւոնդ Ալիշանի, նկատել է հետեւեալը. հայերն ունեցել են պաշտամունքարաններ. դրանք «յայտնի կամ հասարակական վայր»*եր են,* «որտեղ աղօթքով, պատարագով, զոհաբերութեամբ ու պէսպէս արարողութիւններով կամ ծէսերով կատարւում է պաշտամունքը... նախահայրերը առաջներում (եթէ աղօթքները կատարում էին իրենց տան մէջ) զգալի եւ տեսանելի պաշտամունքը կատարում էին անշէն, բաց տեղերում, դա լինէր իրենց ագարակն ու դաշտը, բարձրիկ մի վայր, թէ ծառոտ տեղեր, անտառներ եւ մայրիների պուրակ»*[18]։

Անշուշտ, որքան էլ արժէքաւոր են վերոյիշեալ գրաւոր աղբիւրները, նրանք ի վիճակի չեն սպառիչ լուսաբանել բագին հասկացութեան արտաքին տեսքն ու բովանդակութիւնը։ Նախ, հին Հայաստանին վերաբերող պաշտամունքային եզրոյթները, որոնք վերաբերում են չէնքերին, ընդհանրապէս կառոյցներին,

---

16 CICERO, *Leg.*, II, 26; CICERO, *De republ.*, III, 9, 14.

17 ԱԼԻՇԱՆ, Հ. Ղ., *Հայոց հին հաւատքը*, նշ. աշխ., 214:

18 Անդ, 213:

ծէսերին եւ պաշտամունքային պիտոյքներին, հիմնականում Հայաստանեան հողի վրայ ձեւափոխուած փոխառութիւններ են եւ ունեն մի մեծ թերութիւն՝ թոյլ չեն տալիս տեսնել ժամանակագրական խորութիւն[19]։ Մինչդեռ այս նիւթին հնարաւոր է աւելի մօտենալ գրաւոր, հնագիտական եւ այլ կարգի սկզբնաղբիւրների համադրութեան շնորհիւ։ Խնդիրը գրաւոր սկզբնաղբիւրների ոլորտից հնագիտական տուեալների հարթութիւն տանելով՝ կարելի է գտնել վերոյիշեալ բնորոշումների մեծ մասի համար համապատասխանութիւններ։

Պարզաբանենք նաեւ, որ իրանական եզրոյթների հետեւում յաճախ կանգնած են բաւական ինքնուրոյն զարգացում ապրած շինութիւններ, եւ այն ժամանակ, երբ հին հայերը դրանք կիրառում էին, այդպիսի անուններով սրանք բուն իրանական աղբիւրներում յայտնի չեն[20]։

Կոմմագենէի պաշտամունքային յուշարձանները, ցուցաբերելով զարմանալի բազմազանութիւն, թոյլ են տալիս տեսնել բագիններին տրուած վերոյիշեալ բնորոշումների հիանալի օրինակներ։ Մասնաւորապէս մի շարք յուշարձաններում, առանձին կանգնած սեան վրայ բարձրացուած են առիւծի, ցլի, արծուի արձան կամ մարդակերպ պատկերներով բարձրաքանդակներ, իսկ գոյգ սիւների գագաթին՝ բարաւորի վրայ, դրուած են գահին բազմած արքայի եւ թագուհու ծաւալային արձանները. նշուած բոլոր օրինակներն էլ համարժէք են Բ. Առաքելեանի վերոյիշեալ երկրորդ բնորոշմանը[21]։ Այս արձանների պարզագոյն նախատիպերը Հայկական լեռնաշխարհում ամէնուր տարածուած մենհիրներն ու ձկնանման վիշապներն են։

Երրորդ բնորոշմանը յարիր՝ գերեզմանների վրայ դրուած գոհարանների կամ գոհասեղանների մեծ բազմազանութիւն է դի-

---

19 Օրինակ՝ դժուար է ասել, թէ հելլենիստական Հայաստանում՝ աւելի ուշ, Արշակունի շրջանից յայտնի բագին եզրոյթը գոյութիւն ունէ՞ր, թէ նրան նախորդել է մի այլ հասկացութիւն. այդուհանդերձ, *բագը* ծանօթ էր հայերին նաեւ հելլենիստական ժամանակ, յամենայն դէպս, *թէոֆորիկ* անուններից յայտնի լինելով. յայտնի է Տիգրան Մեծի կուսակալը Ասորիքում՝ Բգադատեսը։ Նոյն բագ տերմինը, կրկին *թէոֆորիկ* տեսքով, յայտնի էր նաեւ ուրարտական դարաշրջանում՝ համաձայն սեպագիր աղբիւրների։

20 ЛЕЛЕКОВ, Л. А., նշ. աշխ., 58-59։

21 HUMANN, K. – PUCHSTEIN, O., *Reisen in Kleinasien und Nordsyrien*, Album, Berlin 1890; ШЛЮМБЕРЖЕ, Д., *Эллинизированный Восток*, Москва 1985, 47.

տուած նոյն Կոմմագենէում, մասնաւորապէս՝ Նեմրութ լերան նշանաւոր սրբարանում։ Ցուշարձանի այս ուրոյն տեսակը, որն իր մէջ միաւորում է դամբարանը եւ բացօթեայ սրբարանը, բլրի լանջերին կառուցած արեւելեան եւ արեւմտեան հարթակների գրեթէ նման կառոյցներում ունի խոշոր քարէ սեղաններ եւ թափուր գահ յիշեցնող գոհասեղանների շարք, որոնց վրայ կատարւում էին գոհաբերութիւններ։ Այստեղ երկրպագւում էին գլխաւոր աստուածները՝ Զեւս-Օրոմազդը, Կոմմագենէ-Անահիտը, Ապոլլոն-Միթրա-Հելիոս-Հերմէսը, Արտագնէս-Հերակլեսը եւ աստուածացուած թագաւոր Անտիոքոս Ա. Կոմմագենեցին։ Մահկանացուների եւ աստուածների միջեւ կապող օղակ էին հերոս նախնիները, որոնց բարձրաքանդակները՝ երկու յիշեալ հարթակների հիւսիսային եւ հարաւային եզրերին, մօտ մէկուկէս տասնեակ իւրաքանչիւր շարքում, կանգնեցուած են խորանարդաձեւ գոհասեղանպատուանդանների վրայ։ Նրանց եւս պարբերաբար մատուցւում էին գոհեր եւ ընծաներ։

Նկատուած է, որ Մեծ Հայքի եւ Կոմմագենէի սրբավայրերում աստուածներին նախատեսուել են ծաւալային քանդակներ՝ «պատկերք», *իսկ թագաւորական տան մեռած նախնիներին՝ բարձրաքանդակներ՝* «կուռք»[22]։ *Այս բեւեռացումը վերանում է այն կոթողներում, որոնցում աստուածութիւնը ձեռք է սեղմում արքային։ Իսկ շատ օրինակներում էլ Գ. Սարգսեանի նկատած կանոնը պարզապէս չի գործում, քանի որ արքաներին հելլենիստական աշխարհում ընդունուած էր աստուածացնել, հետեւաբար՝ նրանց փոխանցելով աստուածային նշաններ եւ պատկերագրական կանոններ։ Սրա մասին են վկայում Ծոփք-Կոմմագենէի տարածաշրջանի արքայական ծաւալային քանդակները, որոնցից ամենախոշորը Սամէսի արձանն է Եփրատեան Արսամէիայում, ինչպէս նաեւ մեզ չհասած Տիգրան Մեծի երբեմնի վիթխարի արձանը*[23]։

---

22 САРКИСЯН, Г. Х., նշ. աշխ., 12:

23 ԺԹ. դարի վաթսունական թուականների վերջում Արեւմտեան Հայաստանում յայտնաբերուել էր Տիգրան Մեծի պատկերաքանդակով եւ ծաւալուն արձանագրութեամբ մի կոթող, որ Բրիտանական թանգարան էր ուղարկուելու Տրապիզոնում բրիտանական հիւպատոսի կողմից, բայց տեղի իշխանութիւնները կանխամտածուած խոչընդոտում էին հայ մշակոյթի այս ճմոյշի հրապարակմանը: Կոթողի ճակատագիրը այդպէս էլ անյայտ է. տե՛ս *«Биржевые ведомости»* (25 апреля 1869); ՄՈՎՍԻՍԵԱՆ, Ա., *Տիգրան Մեծից մեզ հասած գրաւոր ժառանգութեան շուրջ*, ի *Նա-*

Զորրորդ բնորոշմանը՝ սրբարաններին, համապատասխանում է նոյն Նեմրութ լերան արեւելեան հարթակի արեւելեան եզրին բարձրացուած աստիճանաձեւ բուրգը. սրբազան առիւծի եւ արծուի պահապան գոյգի քանդակներով եզերուած այս կառոյցի գագաթին՝ քառակուսի հարթակի կենտրոնում, դրուած է կրակի զոհասեղանը։

Արեւելեան Հայաստանի տարածքում բազմաթիւ են սիւնանման արծուաքիթ կուռքերը։ Հողմիկից գտնուած են ողորկ ճակատով կամ բարձիկների բաժանուած մակերեսով բրգաձեւ կոթողներ[24]*, իսկ նոյն հնավայրից յայտնի՝ կողի վրայ դրուած սալզոհարանի վրայ քանդակուած է արեւի խորհրդանշանը, որի առաջ զոհեր էին մատուցւում*[25]*։ Սրանք մանրամասներ են, որոնք վերաբերում են հին Հայաստանի սրբարաններին։*

Խնդրի լուսաբանման համար ուրոյն նշանակութիւն ունեն հին Արմաւիրի միջնաբերդում բացուած կառոյցները։ Բլրի գագաթին շարունակւում են աշտարակաձեւ կոթողային տաճարական շինութեան պեղումները[26]*։ Նրանից անմիջապէս դէպի հիւսիս, յաջորդ՝ աւելի ցածրադիր հարթակի վրայ, որի հիւսիսային կողմն ընդգծուած է արեւելքից արեւմուտք ձգուող եզրով, տարածւում է յաջորդ հսկայական շինութիւնը։ Բացօթեայ այս համալիրը փորուած է թեքութեամբ դէպի ներքեւ՝ հիւսիս իջնող բնական ժայռի մէջ, եւ նրա արեւելեան, արեւմտեան ու աշտարակաձեւ տաճարին հարեւանող հարաւային պատերն ընկղմուած*

խամաշտոցեան Հայաստանի գրային համակարգերը, Երեւան 2003, 113-118, ծնթ. 10: ՅԱԿՈԲԵԱՆ, Հ., *Տիգրան Մեծ*, Երեւան 2005, 55, ծնթ. 67:

24 ՅԱԿՈԲԵԱՆ, Հ., *Վաղ խաչքարերի մի բնորոշ դասի մօտակայ նախատիպերի մասին*, ի *Հայոց պատմութեանն ու մշակոյթին նուիրուած հանրապետական կոնֆերանս, նուիրուած Ալեք Մանուկեանին, զեկուցումների հիմնադրոյթներ*, Երեւան, ՀՊՊԹ, 1997, 18-20:

25 ՅԱԿՈԲԵԱՆ, Հ., *Նշանագրուած սալ Հողմիկից*, ի *Շիրակի պատմամշակութային ժառանգութիւնը, հանրապետական երրորդ գիտաժողով, զեկուցումների հիմնադրոյթներ*, Գիւմրի 1998, 27-28: ՅԱԿՈԲԵԱՆ, Հ., *Հողմիկի անտիկ տաճարական համալիրի՝ 2006 թ. պեղումների արդիւնքները*, ի *Հին Հայաստանի մշակոյթը. XIV, նիւթեր հանրապետական գիտական նստաշրջանի*, Երեւան 2008, 215 եւ աղ. V. 2:

26 Հրապարակուած վերջին արդիւնքների մասին տե՛ս ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Ի., ԿԱՆԵՑԵԱՆ, Ա., *Արմաւիրի 2002 եւ 2005 թթ. պեղումները*, ի *Հին Հայաստանի մշակոյթը. XIV, նիւթեր հանրապետական գիտական նստաշրջանի*, Երեւան 2008, 161-167:

են ուղղահայեաց տաշուած ժայռի մէջ։ Պայմանական «փառակկու»*ով չինութիւն կոչուած այս կառոյցի կենտրոնում՝ արեւելք-արեւմուտք առանցքի վրայ, միմեանցից ոչ հեռու վեր են խոյանում երկու հզօր մոյթեր, որոնք բարձրանում են բնական ժայռաբեկորի տեսքով։ Տաշուած այս սիւներից արեւմտեանը աւելի նեղ է եւ հարաւային կողմից հիմքի մօտ ստացել է քարերով չարուած ուղղանկիւն հարթակ կամ սեղան*[27]*։ Բլրի ամենաբարձր*

---

27 Այս համալիրին տուած Գ. Տիրացեանի եւ Ի. Կարապետեանի նկարագրութիւնները յոյժ արժէքաւոր են բնուող խնդրի համար, ուստի դրանք յղում ենք գրեթէ ամբողջութեամբ: Արմաւիրի միջնաբերդի «հիւսիսային մասում շարունակուել է բացուել բլրի գագաթին տեղադրուած տաճարային շէնքի յենապատը: Յենապատի բացուած հատուածի ընդհանուր երկարութիւնը կազմում է 10 մ ... յենապատի վերեւի մասը բաղկացած է երկու կանոնաւոր շարքերից, որոնք նստած են բնական ժայռի վրայ... Այստեղ պատից մօտ 2,30 մ հեռաւորութեան վրայ բացուել է ուղղանկիւնի մի հարթակ (չափերը 3 x 3,40), որն իր հիւսիսային մասում անմիջականօրէն կպած է բնական մի ժայռաբեկորի: Հարթակը բարաշէն է, որի պատերը դրսից սուաղուած են կրային նիւթով: Հարթակի եւ նրանից արեւելք մօտ 3,50 մ հեռաւորութեան վրայ գտնուող մի այլ ժայռաբեկորի միջեւ բացուած է միջանցք կամ սենեակ... Այստեղ գտնուած հնագիտական նիւթը գերազանցապէս ուրարտական է... Գտնուել են նաեւ հելլենիստական ժամանակաշրջանի բեկորներ... Ոսկրաբանական նիւթի մէջ գերակշռում են մանր եղջերաւոր անասունների ոսկորները, կարեւոր նշանակութիւն ունի հարթակի մօտ գտնուած բարէ փոքր կուռքը, որն ընդգծում է հարթակի պաշտամունքային բնոյթը: Նման պաշտամունքային նշանակութեան հարթակներ հանդիպում են ուրարտական եւ ասորեստանեան տաճարների շրջապատում (Փառակկու)» (ՏԻՐԱՑԵԱՆ, Գ. Ա. – ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Ի. Ա., *Արմաւիրի պեղումները*, ի *Հայաստանի Հանրապետութիւնում 1989-1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդիւնքներին նուիրուած գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ*, Երեւան 1991, 77-78): Ապա հեղինակները աւելացնում են՝ «հիւսիսային թեւում աշխատանքներ տարուեցին № 29, 32, 35 քառակուսիներում: Պարզուեց, որ ուշ ուրարտական ժամանակաշրջանում վերակառուցումներով այստեղ կազմակերպուել է մի տարածք, որին հարաւային պատ է ծառայել տաճարային շէնքի 10-մետրանոց յենապատը. արեւմտեան պատը հանդիսացել է յենապատի մեծ որմնայեցից հիւսիսային լանջով ձգուող մի շատ լայն պատ, որի կառուցման ժամանակ փակուել է № 25 սենեակի մուտքը: Հիւսիսային պատը հաւանաբար դրուած է եղել յենապատին՝ 8 մ հեռաւորութեամբ զուգահեռ ձգուող ժայռի վրայ, որը կրում է մշակման պարզորոշ հետքեր: Որպէս արեւելեան պատ է ծառայեցուել այստեղ վեր բարձրացող խրամաժայռը, որն այդ նպատակով տաշուել է եւ ծեփուել: Ծեփածոյ եւ սպիտակ կրաքարով սպիտակեցուած են եղել ողջ

կէտում կանգնեցուած ուշագրաւ տաճարական կառոյցին հարեւանող բացօթեայ այս շինութիւնը գուգահեռներ ունի անտիկ Միջագետքի տաճարական համալիրներում, իսկ յիշեալ երկու մոյթերը Միջագետքում նուիրուած են զոյգ աստուածութիւններին՝ Ապոլլոնին եւ Աֆրոդիտէին։ Հնարաւոր է՝ անտիկ դարաշրջանում նման սինկրետիկ իմաստաւորում ունէր նաեւ Արմաւիրի «փառակկուն»։

Տուեալ դէպքում այս կառոյցը մեզ հետաքրքրում է քննելոց թեմայի առնչութեամբ, եւ կարելի է ենթադրել, որ հրապարակն իր մոյթերով եւ գոհաբերութիւնների մնացորդներով, օրինակ՝ ցլիկի կաւէ պտեակով հանդերձ, ներկայացնում է բագինի տեսակներից մէկը։

Ոչ պակաս արժէքաւոր են չօշափուող թեմայի համար հին Արմաւիրի միջնաբերդի արեւելեան լանջի ուսումնասիրութիւն-

---

շինութեան պատերը եւ յատակը, ներառեալ շինութեան կենտրոնում բարձրացող եռաստիճան հարթակ «փառակկուն» (3,5 x 3,5 մ չափերով, աստիճանների 1,9 x 1,5 մ լայնութեամբ)։ Շինութեան պեղման ժամանակ գտնուած հնագիտական նիւթերը՝ խնկարկման անօթները, դրոշմներ կրող «գարեջրի» հաստապատ կոնքերի, կարասների բեկորներ, առատ ոսկրաբանական մնացորդներ եւ վերջապէս «փառակկու»ի արեւելեան ստորոտի մօտ յայտնաբերուած բազալտէ կուռք, թոյլ են տալիս ասել, որ բացուած շինութիւնը ունեցել է պաշտամունքային գործառոյթ... Այս շինութեան... արեւելեան պատ հանդիսացող հիմնաժայռի եւ յենապատի միջեւ բացուեց 2,3 մ լայնութեամբ եւ 3,6 մ երկարութեամբ մի հատուած։ Յենապատը այստեղ ետ է քաշուած, որի առջեւ կանգնեցուել է արեւմուտքից-արեւելք ձգուող 0,8 մ հաստութեամբ մի պատ, որն ունի 0,5 մ բարձրութիւն։ Պատը, այստեղ առաջացած 1,5 մ լայնութեամբ տարածքը հիմնաժայռի հետ միասին ծեփուած, սուաղուած է լաւ հունցած մանրահատիկ կաւով։ Ողջ տարածքը կրում է կրակի, մրի, մոխրի հետքեր, որոնց մէջ եւ կենդանիների ոսկորներ։ Ծեփածոյ տարածքի կենտրոնում բացուեց մի հոր (տրամ. 1,3 մ), որի շուրջերը եւս ծեփածոյ էին։ Հորից գտնուած խեցեղէնի, թրծակաւային արձանիկի պատուանդանի բեկորները վերաբերում են հելլենիստական մշակոյթին... այս ծեփածոյ տարածքը, եթէ նոյնիսկ կառուցապատուած լինի «փառակկուն» ընդգրկող (ուրարտական դարաշրջանի – Հ. Յ.) սրբարանի հետ, օգտագործուել է նաեւ ետուրարտական եւ հելլենիստական ժամանակաշրջանում դարձեալ պաշտամունքային նպատակով» (ՏԻՐԱՑԵԱՆ, Գ. Ա. – ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Ի. Ա., *Արմաւիրի պեղումները (1991-1992 թթ.)*, ի *Հայաստանի Հանրապետութիւնում 1991-1992 թթ. Դաշտային հնագիտական աշխատանքների արդիւնքներին նուիրուած գիտական նստաշրջան, զեկուցումների թեզիսներ*, Երեւան 1994, 29-30)։

ները։ Այստեղ լանջն ի վեր բարձրացուած են պաշտամունքային կառոյցներ, որոնք «եզրափակւում են արեւելեան լանջի գագաթին վեր ցցուած ժայռի մէջ փորուած սենեակատիպ տարածքով (3,60 x 3,20 մ)։ Վերջինիս հիւսիսային եւ հարաւային կողմերում ժայռը տաշուած է երկաստիճան պատուանդանի ձեւով (երկ. 3,60 մ, լայնքը 1,0 մ, բարձր. 1,802,0 մ)։ Տարածքի արեւմտեան կողմի ժայռի փորուածքը ցածր է՝ ընդամէնը 1520 սմ, իսկ արեւելեան կողմի բարձրութիւնը հասնում է 1 մետրի։ Այս տարածքի կենտրոնական մասում բացուեց ժայռի ճեղք՝ արեւելք-արեւմուտք ձգուածութեամբ, որի եզրերը եռաստիճան է ընթերցւում (երկ. 3,0 մ, լայն. 0,6 մ)։ Նախնական եզրայանգմամբ՝ հաւանաբար յայտնաբերուել է ժայռակոփ, բացօթեայ տաճար, որի պատուանդաններին կանգնած են եղել արձաններ (Միհր եւ Անահիտ), որոնք ողջ լանջի հետ ծառայել են Արմաւիրում իրականացուող պաշտամունքի ծէսերին եւ արարողութիւններին»[28]։

Բերուած քաղուածքում կրկին տեսնում ենք բացօթեայ՝ զոհասեղաններով կառուցապատուած շինութիւն, որ համապատասխանում է բագինների առաջադրած պահանջներին[29]։

Ժայռափոր արկղների շարք է բացուած մեր կողմից Օհանեանի մօտ։ Ոչ պակաս ուշագրաւ են Զիգիքարի եւ Ելփինի ժայռափոր հարթակների գիւտերը։ Դրանցից առաջինը գտնւում է Բիւրականից 1,5 կմ դէպի հիւսիս-արեւելք՝ ձորակի մէջ։ 5 մ բարձրութիւն եւ նոյնքան լայնութիւն ունեցող մշակուած տուֆէ ժայռը հիւսիսային կողի մէջ ունի եօթ կոր աստիճաններ եւ նրանց երկու կողմերում առկայ հարթեցուած ուղղահայեաց մա-

---

28 ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Ի. – ԽԱՉԱՏՐԵԱՆ, Ժ. – ԿԱՆԵՑԵԱՆ, Ա. – ՂԱՖԱԴԱՐԵԱՆ Գ., *Արմաւիրի 1996 թ. աշխատանքների արդիւնքները*, ի *Հայկական բաղաբակրթութիւնը հնագոյն ժամանակներից մինչեւ քրիստոնէութեան ընդունումը, գիտաժողովի նիւթեր*, Երեւան 2000, 25: Հմմտ՝ КАРАПЕТЯН И.- ХАЧАТРЯН Ж.- КАНЕЦЯН А, *Доурартский Армавир (III – начало I тыс. до н. э.)*, в *Историко-филологический журнал*, 2004, № 2, 254-275.

29 Հայաստանում եղել են տասնեակ հեկտարներ գրաւող բացօթեայ ժայռափոր համալիրներ, որոնք, եթէ անգամ հիմնադրուած են Բրոնզի դարում, ապա գործել են նաեւ յետագայում՝ ընդհուպ մինչեւ անտիկ դարաշրջանի աւարտը։ Սրանցից են Աշտարակի մօտ՝ Ագարակի համալիրը, Շիրակում Գիւլլիբուլաղի համալիրը։ Սրանց ուսումնասիրութիւնը նոր է սկսուած, եւ հնարաւոր վերարերմունքը բագիններին դեռ կարօտ է գիտական լուրջ պրպտումների։

կերեսներ. այս աստիճաններից վերինը, գրեթէ ուղիղ անկեան տակ բեկուելով դէպի արեւելք, սկիզբ է դնում չորս լայն աստիճանների, որոնք տանում են դէպի ժայռի վերնամասը։ Այն մշակուած է ուղղանկիւն հարթակի տեսքով (երկ. 1,37 x 1,25 մ մակերեսով եւ 15 սմ բարձրութեամբ), որի վրայ, ինչպէս եւ որոշ աստիճանների մակերեսին, փորուած են պնակներ[30]*։*

Ելփինի գոհարանը մենք յայտնաբերել ենք 1985ին հետախուզական աշխատանքների ժամանակ։ Գիւղի եզրին ձգուող բարձր ու երկարուկ բլրի հարաւային ծայրին, ներքեւից դէպի գագաթ թեք լանջի մէջ փորուած են աստիճաններ, որոնք տանում են դէպի մօտ 5 մետր կողմեր ունեցող հարթակը՝ փորուած ժայռի մէջ այնպէս, որ երկու կողմերից՝ աստիճանի դիմաց եւ ձախից, այն շրջապատուած է կողերով, իսկ աջ կողմում հարեւանում է քարայրի, որի եռանկիւնաձեւ բացուածքը հիմքի մօտ երկու կողմերից մշակուած է կրկնակի շրջանակների տեսքով։ Մուտքից ներս մի բաւական ընդարձակ սենեակ է՝ պատերին եւ առաստաղին մշակման հետքերով։

Մի ուշագրաւ ժայռակերտ սրբարան էլ յայտնաբերել է Հայկաձորի արշաւախումբը։ Բնական ժայռի հարաւարեւելեան մասը տաշուել եւ վեր է ածուել խորանարդի՝ արեւելքից կից ցածր սեղանով հանդերձ։ Ժայռի մնացած մասը հիւսիսային եւ արեւմտեան կողմից թողնուած է տաճեւ՝ բնական տեսքով։ Խորանարդի հիմքը բարձր պատուանդանն է, որի վրայ դէպի վեր են ելնում երեք բարձր աստիճաններ։ Պատուանդանով հանդերձ՝ խորանարդի ընդհանուր բարձրութիւնը եւ լայնութիւնը մօտ 1,5ական մետր է։ Այս գոհասեղանի հարթեցուած գագաթի կենտրոնում փորուած է պնականման փոս[31]*։*

Վերջին հինգ տարիներին խնդրի լուծմանը զգալի նպաստում է Հողմիկի անտիկ հնավայրում բացուած եւ պայմանական «արեւմտեան» *կոչուած համալիրը։ Այն իր մէջ ներառում է գրե-*

---

30 ԳԷՈՐԳԵԱՆ, Ա. Յ. – ՊԵՏՐՈՍԵԱՆ, Լ. Ա., *Բիւրականի հնագոյն պաշտամունքային յուշարձանը*, ի *Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառոյցներում (1986-1987 թթ. պեղումների արդիւնքները)*, I, Երեւան 1993, 20-25, աղ. XX:

31 Խորին երախտագիտութիւն ենք յայտնում Հայկաձորի զոհասեղանի մասին հանգամանալի տեղեկութիւններ յայտնելու եւ յատկանշական լուսանկարներ մեզ փոխանցելու համար հնագէտներ Լարիսա Եգանեանին եւ Համազասպ Խաչատրեանին:

թէ բոլոր վերոյիշեալ ընորոշումները՝ բացի գերեզմանի վրայ կանգնեցուած գոհասեղանից, որ գուցէ հնարաւոր լինի յայտնաբերել յետագայում։ Թէեւ «արեւմտեան» համալիրի պեղումները դեռեւս չեն աւարտուած, սակայն հիմնականում բացայայտուած են նրա գլխաւոր առանձնայատկութիւնները, ընդհանուր յօրինուածքը եւ, որ շատ կարեւոր է մեր թեմայի համար, նրա կառուցապատման յաջորդականութիւնը։

Նախապէս բաց տեղանքում կանգնեցուել է մօտ 4 մետր երկարութեամբ, 2,5 մետր լայնութեամբ եւ մօտ 1,5 մետր բարձրութեամբ մի կանոնաւոր ուղղանկիւն պատուանդան։ Նրա չորս անկիւնները շարուած են խնամքով տաշուած բազալտէ ուղղանկիւն վէմերով, հարթակը բոլոր կողմերից ունի հարթ ճակատներ։ Ն.Թ. Ա. դարում կանգնեցուած հարթակի շուրջ յաջորդ չինարարական փուլում հարաւից, արեւելեան եւ արեւմտեան կողմերից կառուցուել է աւելի քան 180 մ բարձր հգօր պարիսպ յիշեցնող հաստահեղոյս մի պատ։ Ապա, հարթակի եւ պարսպի արեւելեան թեւի միջեւ եղած ազատ տարածութիւնը զբաղեցուել է երկու կից քարարկղներով։ Յաջորդ փուլում հարթակի եւ նրան կից քարարկղների կանոնաւոր ուղղանկիւն կառոյցը հիւսիսային ճակատից ընդարձակուել է գրեթէ 5 մ։ Այս աւելի ընդարձակ շինութեան կենտրոնում թողնուած ուղղանկիւն բացուածքում գետեղուել է խոշոր մի արկղ՝ բոլոր կողմերից ընդգծուած քարէ եզրերով։ Նրա արեւելեան կողմից առանձնացուել է մի նեղ գետեղարան։ Ընդ որում՝ բոլոր քարարկղներում բացուել են կենդանիների մնացորդներ։

Յաջորդ փուլում՝ ստացուած գոհասեղան-հարթակի երկայնական արեւմտեան պատը շարունակուել է դէպի հիւսիս։ Ցըստակ երեւում է պարսպի հարաւային եւ հիւսիսային՝ նոր կէսերի միացման տեղը։ Հարթակի առաջ գոյացած հրապարակը միաժամանակ հիւսիսից սահմանափակուել է պարսպի մի ուրիշ վիթխարի թեւով։ Ծիսական արարողութիւններն ընթացել են հարթակից հարաւ՝ սահմանափակ վայրում, եւ հարթակի հիւսիսային կողմում՝ ներքին բակի վերածուած ընդարձակ հրապարակում։ Յաջորդ քայլը եղել է հարթակը դէպի հիւսիս մի անգամ եւս, այս դէպքում՝ աւելի քան երեք մետրով ընդարձակելը։

Այս հատուածի պեղումներից պարզուել է, որ տոփանուած յատակի վրայ փռուել է հենք (սուբստրուկցիա)՝ աւազի, խճի եւ կաւի բարակ շերտ, որի վրայ դրուել են մեծ քարերը՝ հարթ ճակատներով դէպի դուրս։ Ապա այս ճակատներից ներս միջա-

կայքը լցուել է քարերով ու կաւի գանգուածով՝ կազմելով մի ամուր ու բարձր հորիզոնական հարթութիւն։

Ստեղծուած ընդարձակ հարթակի կենտրոնական մասն այլեւս մատչելի չէր ճակատների առաջ կանգնող սպասաւորներին. այս պատճառով՝ վերջին յաւելուածի արեւելեան ճակատին, քիչ ներս ընկած մասում կառուցուել է աստիճան, որով հեշտութեամբ կարելի էր բարձրանալ հարթակի վրայ։ Նրա հիւսիսային կողմի հրապարակում մոխրի թանձր շերտի մէջ գտնուած կենդանիների մնացորդները, շարժական կրակարանները, քրեղաններն ու թասերը, քառակուսի պատուանդանով քարէ կուռքը այստեղ իրականացուած ծէսերի վկայութիւնն են։

Հաւանաբար, համալիրի հիւսիսային պարիսպը կառուցելիս, նոյն փուլում նրան հարաւային ճակատից կցուել է մի ընդարձակ շինութիւն։ Այն ունի գրեթէ 14 մետր երկարութիւն, 3,55 մետր լայնութիւն։ Այն իր չափերով էապէս տարբերւում է յիշեալ պարսպի թեւերից։ Այս հսկայական գանգուածի կենտրոնում՝ հարեւան կառոյցների համեմատութեամբ բաւական բարձր մակարդակի վրայ, բացուել է մայր հողի շերտը եւ նրան աւելացուած կաւի լիցքը։ Գանգուածը բոլոր կողմերից երեսապատուած է խոշոր քարերով։ Նրա մակերեւոյթին բացուած են խոշոր եւ մանր եղջերաւոր կենդանիների, ձիերի բազմաթիւ մնացորդներ։

Ինչով էր պայմանաւորուած զոհասեղան-հարթակը եւ նրա առաջ տարածուող հրապարակը պարսպանման գանգուածով շրջապատելը, միանշանակ դժուար է որոշել։ Բացի պաշտպանական նպատակից, որն այստեղ եթէ առկայ էր, ապա երկրորդական նշանակութիւն է ունեցել, պարիսպը համալիրին հաղորդում էր վիթխարիութիւն։

Համալիրի արեւելեան գանգուածեղ յաւելման նշանակութիւնը եւս առայժմ ամբողջովին պարզ չէ, քանի դեռ չեն աւարտուած պեղումները նրանից արեւելք եւ հիւսիս։ Նրա մէջ հիւսիս-արեւելեան կողմից բացուած քարի երեք շարք աստիճանները թոյլ են տալիս ենթադրել, որ 3,55 մետր լայնութեամբ այս գանգուածը եւս ծառայել է որպէս սրբազան հարթակ։ Հին Յունաստանից յայտնի՝ հարիւրի հասնող ցլերի միաժամանակ կատարուող զոհաբերութիւնները կարելի էր իրականացնել հէնց նման կառոյցի վրայ։ Իսկ Հայաստանում կենդանիների այսպիսի գանգուածային զոհաբերութեան հնարաւորութիւնը, յատկապէս պետականօրէն նշուող արարողութիւնների ժամանակ, որոնց ներ-

կայ էին արքան, գերագոյն քուրմը եւ բազմաթիւ նախարարներ, լիովին իրատեսական է[32]։

Մինչդեռ համալիրի հարաւային եզրին կառուցուել են սենեակներ, որոնց հիւսիսահայեաց մուտքերն արդէն որոշակի երեւում են։ Ցիշեալ 3,55 մետր լայնութեամբ կառոյցից արեւելք բացւում է մի այլ հրապարակ, որ ժամանակի ընթացքում կառուցապատուել եւ խիստ սահմանափակուել է։

Նկարագրուած ընդարձակ կառոյցը՝ գերազանցապէս բացօթեայ չինութիւններով, դիցուք՝ սրբազան հարթակներով, գոհասեղաններով, զոհաբերուած կենդանիներով, կուռքերով, լիովին համապատասխանում է հայագիտութեան մէջ գրաւոր աղբիւրներից վկայուած բագիններին։ Աւելին, այն ուրիշ յուշարձանների հետ միասին օգնում է շօշափելի տեսնել դրանց իրական պատկերը եւ մանրամասների բազմազանութիւնը։

Կարծում ենք՝ պարսպանման պարագիծը եւս օգտագործուել է ծէսերի համար։ Նման եզրակացութեան համար հիմք են հանդիսանում հետեւեալ տուեալները։ Պարիսպների կամ հաստ պատերի վերին մակերեւոյթը՝ հանրայայտ է, որ բոլոր ժամանակներում օգտագործուել է երթեւեկութեան համար։ Շէնքերի բարձր մասերը, ոչ միայն տներին կից աշտարակները, այլեւ՝ կտուրները, կիրառուել են ծէսերի համար. սա յատկապէս լաւ է ուսումնասիրուած զրադաշտական ծէսերի ոլորտում[33]։ Հողմիկի «պարսպի» վերին մակերեւոյթի տարբեր կէտերում գտնուել են կենդանիների մնացորդներ։ «Պարսպի» վրայ կարելի էր բարձրանալ շարժական աստիճաններով, բացի այդ, արդէն նշուեց, որ համալիրի մի մասում բացուել են վեր տանող քարէ աստիճաններ։

Հետաքրքիր է «պարսպի» արտաքին ենթակառոյցը։ Թէեւ նրա պեղումները դեռ չեն աւարտուած, բայց հարաւից եւ արեւմուտքից նրա արտաքին ճակատին փոխուղղահայեաց շարուած են մօտ 1,5 մ միմեանցից հեռացած եւ սրանից քիչ աւելի երկար զուգահեռ քարէ միջնորմներ, ըստ երեւոյթին՝ ծէսին նախապատրաստելու համար այստեղ կենդանիներ կանգնեցնելու նպատակով, որ յայտնի է նրանց մնացորդներով, իսկ հարաւարեւմտեան ճակատին յաւելուած է մի քարարկղ։

---

32 Սրա մասին տե՛ս, օրինակ, ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, § 809:

33 ДОРОШЕНКО, Е. А., *Зороастрийцы в Иране*, Москва 1982.

Անտիկ Հայաստանի տաճարները՝ լայն առումներով, բարդ ենթակառոյցներից բաղկացած շինութիւններ էին՝ շրջապատուած գանձատներով, պահեստային շինութիւններով, հիւրանոցներով, մշակովի հողերով, արօտավայրերով, տաճարապատկան գիւղերով ու ագարակներով։ Տաճարական այս խոշոր համալիրների կորիզը վերը նշուած բագիններն էին եւ գերազանցապէս ծածկի տակ գտնուող մեհեանները։ Մի դէպքում այս երկուսը կարող էին ի-րարից հեռացած լինել, մի այլ դէպքում՝ հարեւանել։

Ելնելով վերոյիշեալ գրաւոր սկզբնաղբիւրների եւ ներկա-յացրած օրէցօր աճող հնագիտական նիւթի քննութիւնից՝ կարե-լի է արձանագրել, որ հին Հայաստանի բագինները եղել են գե-րազանցապէս բացօթեայ կառոյցների բաւական ընդարձակ եւ բարդ համալիր, որ մի դէպքում կանգնեցւում էր ծածկի տակ առնուած տաճարի առաջ կամ նրա մերձակայքում՝ նման կերպ ներառուելով սրբազան տարածքի՝ տեմենոսի մէջ, միւս դէպքում էլ կանգնած էր մեկուսի։ Նրանց գլխաւոր բաղադրիչը զոհասե-ղանն էր՝ իր բազմաթիւ հնարաւոր տարբերակներով հանդերձ։ Այսպէս՝ բագինները հիմնականում բացօթեայ կառոյցներ են, ի տարբերութիւն հիմնականում ծածկի տակ առնուած շինութիւն-ների, նեղ առումով՝ մեհեանների։

Մեհեանի եւ բագինի ծաւալատարածական տրոհումը անհ-րաժեշտութիւն էր, քանի որ բազմամարդ ծէսերի համար ծածկի տակ առնուած մեհենական սրահները, առաւել եւս՝ խցերը, յար-մար չէին։ Մեհեանը աստծոյ տունն էր, իսկ նրա եւ նախնիների պատուին նախատեսուած զոհասեղանները դրւում էին այս մե-հեանների բակում, մերձակայքում կամ մեկուսի տեղանքում։ Ս-րա օրինակները Հին աշխարհի տարբեր երկրներում շատ են ու հանրայայտ։

Մեհեանի եւ բագինի միջեւ գործառոյթների բաշխումը եւ փոխադարձ կապը ստեղծում էր մի կուռ համալիր, որի ներսում երկու բաղկացուցիչների գործառոյթների միջեւ հնարաւոր էին փոխներթափանցումներ։ Մեհեանի ներսում՝ «սուրբ սրբոցում», *ուր սովորաբար արգելուած էր շարքային մարդու ներկայութիւ-նը, դրւում էին տարբեր տիպի զոհասեղաններ, սակայն սահմա-նափակ թուով ծառայողների եւ ընտրեալ յաճախորդների հա-մար, իսկ փոխարէնը՝ բացօթեայ կառոյցների՝ բագինների համա-լիրը կարող էին ներառուել նրանց հարեւանող օժանդակ սե-նեակներ, ինչպէս տեսնում ենք Հողմիկի արեւմտեան համալիրի հարաւային մասում։ Պաշտամունքային համալիրների նման բեւե-*

ռացումը երկու կէսի որոշակի կապի մէջ է նրանց ծաւալատարածական ընդարձակման գործընթացի հետ։

Ինչպէս խոշոր բնակավայրերում տեղի էր ունենում տրոհում աշխարհիկ եւ հոգեւոր բաժինների, յաճախ միջնաբերդերի տեսքով, այնպէս էլ առանձին վերցուած՝ հոգեւոր հատուածում անխուսափելի էր գործառական բաժանում զանգուածային եւ ոչ զանգուածային արարողակարգերի, հիմնական եւ օժանդակ գործառոյթների իրականացման տեղի եւ պիտոյքների յօրինուածքի միջեւ։ Սրա մի հիանալի օրինակ, թէեւ առաջին հայեացքից միամիտ չարադրուած, տալիս է Մովսէս Խորենացին «կուռքերի քաղաք» *Բագարանի մասին պատմելիս։* «բայց Երուանդն իր քաղաքը *(Երուանդաշատը – Հ. Յ.)* շինելով՝ Արմաւիրից այնտեղ փոխադրեց ամէն ինչ բացի կուռքերից, որովհետեւ իրեն համար օգտակար չհամարեց նրանց էլ իր քաղաքը փոխադրել, որ մի գուցէ երբ ժողովուրդը զոհաբերութեան համար այնտեղ գայ, քաղաքն զգուշութեամբ չպահվի»[34]։ *Իհարկէ, վերն ակնարկած մի տեղ հաւաքուած ժողովրդի ապստամբութիւնից խուսափելու մտահոգութիւնը Բագարանի եւ Երուանդաշատի բեւեռացման ընդամէնը մի, այն էլ՝ ոչ էական պատճառն էր։ Հոգեւոր ոլորտն առանձին վերցրած՝ ոչ պակաս մեծ ու բազմամարդ ծաւալների հետ գործ ունէր, սրանց կառավարելու հարցում շատ մանրամասներում կրկնելով աշխարհիկ ոլորտի առանձնայատկութիւնները։ Նոյն հաղորդման մէջ Խորենացին նաեւ նկատում է, որ Երուանդը* «Ախուրեան գետի վրայ շինեց մի փոքր քաղաք *նման իր քաղաքին (այսինքն՝ Երուանդաշատին – Հ. Յ.)* եւ կոչեց Բագարան»[35]։

Բագիններ կառուցելու եւ դրանք սպասարկելու համար յատկացւում էին, դատելով Նեմրութ լերան եւ միւս սրբարանների տարածքում գտնուած ընդարձակ արձանագրութիւններից, հողեր, գիւղեր՝ իրենց բնակչութեան հետ միասին, քրմեր[36]*, եւ բագինների շարժական ու անշարժ գոյքը, եկամտի աղբիւրները սրբազան ու անձեռնմխելի էին։ Բազմամարդ թափօրը նշանակուած օրացուցային օրերին այստեղ ներկայ էր խոշոր արարողութեան, որի մի կարեւոր մասը կռապաշտութիւնն էր*[37]։

---

34 ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ, *Հայոց պատմութիւն*, Բ., խ.:

35 Անդ:

36 САРКИСЯН, Г. Х., նշ. աշխ., 7:

37 ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ, *Հայոց պատմութիւն*, Բ., ը.; Բ., թ.:

Դէպի հին Հայաստանի գլխաւոր բագիններ, պետականօրէն հաստատուած կարգով, կատարւում էր ուխտագնացութիւն՝ աստուածների պատկերներին երկրպագելու համար[38] *բագինի վրայ դրած կուռքերի առաջ ծնկի իջնելով եւ գետինը համբուրելով։ Այսպէս, օրինակ, թագակապ ասպետ Ենանոսին* «Արշամ թագաւորն… հրամայեց… երկրպագել արեգակին եւ թագաւորի կուռքերը պաշտել»[39]։

Այսպէս՝ բագինները ժողովրդական հաւատալիքներին համապատասխան պարզունակ սրբարաններից առաջացած եւ մանրամասն մշակուած՝ պետականօրէն կանոնակարգուած կառոյցներ էին, որոնց առաւել կարեւոր մասը բաց տեղանքում կամ սրբազան ցանկապատի ներսում կանգնեցուած զոհասեղաններն էին՝ իրենց բազմազան դրսեւորումներով եւ արարողակարգի մանրամասներով հանդերձ։

ՀԱՅԿ ՅԱԿՈԲԵԱՆ

38 *Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց*, § 22: ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ, *Հայոց պատմութիւն*, Բ., թ.:

39 ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ, *Հայոց պատմութիւն*, Բ., իդ.:

Summary

BAGIN SHRINES OF THE ANCIENT ARMENIA

HAYK HAKOBIAN

One of the most remarkable areas of the spiritual heritage of ancient Armenia is the cult of ancient Armenians and the complex of institutions related to it. Early medieval Armenian written sources left little but important information about them. Some of these data allude to unique sacred structures - bagins (Agathangelos, Movses Khorenatsi). Based on the context, it is assumed that the bagins were part of the temples, or were independent structures located in separate sanctuaries.

Until now, there is no stable opinion in Armenology about the external structure of bagins and their specific function. Moreover, judging from the context of the written sources, these two were closely related to each other. At the same time, in Armenology, there are at least five definitions for bagins equally acceptable to academic science. This very fact indicates that the definitions are just scientific hypotheses, not supported by new evidence which is highly necessary to shed light not only on the ideological side of the ancient Armenian statehood in general, but also on the pagan religion of the Armenians and the rituals in particular. It is a separate issue whether the Armenian temples and the structures adjacent to them remained in a strictly traditional form until the dawn of Christianity and were similar to the creations of their Eastern neighbors, or had a more Hellenized appearance.

The only way to get an adequate answer to these questions is to compare the data of the written sources with the religious structures of the neighboring peoples and, more importantly, with the archaeological material of Armenia. Until recently, such archeological data did not appear, leaving Armenologists puzzled as to which of the five possible versions is closer to reality. Are the Bagins mehyans, statues, altars, sanctuaries, or a complex of buildings? It should be noted that some of these definitions are complementary rather than contradictory and the latter of them offers a rather extensive and vague formulation.

The solution to the problem is starting to emerge in the territory of the large temple complex of Hoghmik excavated in the north-west of the Republic of Armenia, where unique monumental structures included in an open-air complex have been discovered in the last two archaeological seasons. It is these that must be seen as the long-sought bagins, the composition of which is so elaborate and restrained that, together with the accompanying material, it enables certain judgments about the rituals performed here at the time.